ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արդյունքում ստացված առարկությունների և առաջարկությունների

Հ/Հ	Առարկության և (կամ)առաջարկության հեղինակը, գրությանամսաթիվը և համարը	Առարկության և (կամ)առաջարկության ամփոփ բովանդակությունը	Առարկության և (կամ)առաջարկությանվերաբերյալ համայնքի ղեկավարի եզրակացությունը	Նախագծում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը
	1	2	3	4
1	Լևոն Բարսեղյան Գյումրու համայնքապետ արանմուտքագրած Դ/1694-21 2021-12-16	1. Թափառող շների համար ստեղծել ապաստարան իր ենթակառուցվածքով և աշխատակազմով	Ընդունված է	
		2.Ներհամայնքայինհասարակականտրանսպորտիարդիականացում	Ընդունված չէ	Ձեր նշվածառաջարկությունները գտնվում են քննարկման փուլում
		3. Բաց առևտրի կարգավորում	Ընդունված է մասամբ	Մայթերը ազատելու նպատակով ներկա պահին ընթանում են տարբեր թաղերում փոքր շուկաներ ստեղծելու աշխատանքները, ինչպես նաև նախատեսված է նախկին շուկայի շենքի և տարածքի վերականգնում և բարեկարգում մասնավոր ներդրումների հաշվին:

		4.Գերազմանոցային տնտեսության և կառավարման բարեփոխում, հաստիքների և դրույքների վերանայում, գերեզմանոցների քարտեզագրում, վճարովի ծառայությունների ներդրում	Ընդունված է մասամբ	Հաշվի առնելով Ձեր առաջարկությունները ՀՀՀԶԾ-ի հավելված 41-ում կատարվել են փոփոխություններ՝ ներառվել են կետեր կապված հուղարկավորությունների ծառայությունների բարելավման, վճարովի ծառայությունների ներդրման, սգո պարագաների վաճառքի և գերեզմանոցների քարտեզագրման հետ
		5.Գերեզմանատների հողհատկացման պարզեցում և ստանդարտացում	Ընդունված չէ	Հողհատկացման գործընթացը կարգավորվում է օրենքի սահմաններում:
		6.Ալեք Մանուկյան փողոցի կամրջի հետազոտություն	Ընդունված չէ	Արդեն իսկ կատարվում են աշխատանքներ Ալեք Մանուկյան փողոցի կամրջի հետազոտության հետ կապված
		7. Զբոսաշրջային ավտոբուսների համար կայանման տարածքի հատկացում և կահավորում	Ընդունված չէ	Զբոսաշրջային ավտոբուսների համար կայանման տարածք հատկացված է ՎԶԵԲ-ի ծրագրով
		8.Զավթված հանրային	Ընդունված չէ	Զավթած հանրային

		տարածքների, մայթերի, գազոնների, բակերի վերադարձ քաղաքացիներին		տարածքների, մայթերի, գազոնների, բակերի քաղաքացիներին վերադարձման գործընթացը սկսված է
		9. Տարեկան նորոգել մեկ շատրվան	Ընդունված չէ	Շատրվանների վերանորոգում նախատեսվում է և ներառված է ՀՀՀԶԾ-ում
		10. Զբոսաշրջությանխթանում	Ընդունված է մասամբ	Զբոսաշրջության խթանման նպատակով պատմամշակութայի ն արժեք ներկայացնող հուշարձանների, շենքերի և փողոցների առնվազն եռալեզու ցուցանակներով կահավորման կամ QR կոդի տեղադրման աշխատանքները ընթացքի մեջ են: Նախատեսվում են նաև ինֆորմացիոն կետերի տեղադրում օդանավակայանում, կայարանում և Բավրայի անցակետում:
		11.Ներդրումներիխթանում	Ընդունված չէ	Համայնքապետարա նում առկա է ծրագրերի և

				արտաքին կապերի բաժին, որի գործունեության միջոցով խթանվելու է քաղաքային տնտեսության մեջ ներդրումները և դրամաշնորհների ներգրավման գործընթացը
		12.Արտաքինկապերիզարգացում	Ընդունված չէ	Սկսել ենք իրականացնել ծրագրային առավել արդյունավետ համագործակցությունն Գյումրու քույր քաղաքների հետ, ինչպես նաև Գյումրիում կազմակերպել միջազգային արվեստի տոնավաճառներ, ցուցահանդեսներ և այլ
		13. Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի ավելացման հետ կապված	Ընդունված չէ	Ծրագրում հաշվարկված է միայն համայնքապատկան նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվի հարաբերությունը համայնքի նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվին,

				իսկ այդ թիվը ավելի մեծ է ի հաշիվ մասնավոր գործող զարգացման կենտրոնների և դպրոցներում գործող նախակրթարանների
		14.ՀՈԱԿ շենք, շինությունների նորոգման աշխատանքների հետ կապված	Ընդունված չէ	ՀՈԱԿ շենք, շինությունների վերանորոգման և վերազինման աշխատանքները շարունակական են, պայմանավորված ամեն տարի մեծ թվով երեխաների հաճախումով
		15.«Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի շահագործումից հետո հանձնառության հարաբերակցության հետ կապված		«Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոցի շինարարությունը իրականացվում և վերահսկվում է ՀՀ կառավարության կողմից, ուստի հետագա շահագործման հետ կապված հարցերը ավելի պարզ կլինեն մարզադպրոցի կառուցումից հետո

2	«Զարթոնք» խմբակցութուն Գյումրու համայնքապետարան մուտքագրած **Դ/21794-21 16.12.2021**	1. Կառուցել ճանապարհի երթևեկելի հատված, որը կմիացնի Երևանյան խճուղին Մսի կոմբինատ թաղամասին	Ընդունված է մասամբ	Հարցը բարձրացված է, քննարկվում է և ներառված է գլխավոր հատակագծի մեջ, ՀՀՀԶԾ-ի մեջ ներառված չէ տեխնիկական հարցերի առկայության («Հարավկովկասյաներկաթուղի») և ֆինանսական աղբյուրների բացակայության պատճառով
		2. Բուլվարային թաղամասում գտնվող 9 հարկանի բազմաբնակարան շենքում վերելակի տեղադրում և գործարկում	Ընդունված չէ	Արդեն իսկ առկա է նախնական պայմանավորվածություն Երևանի քաղաքապետարանի հետ Երևանի բարձրահարկ շենքերից հանված և գործող վերելակները Բուլվարային թաղամասում գտնվող 9 հարկանի շենքերում տեղադրելու համար:
		3. Տնակների բնակիչների հաշվառման և տնակների գույքագրման հստակ արդյունքներով ելնելով, տարածքը առանձին դեպքերում անհատույց	Ընդունված չէ	Տնակի բնակիչները հաշվառված են, իսկ տնակները գույքագրված են քաղաքաշինության կոմիտեի կողմից,

		տրամադրել տնակի սեփականատիրոջը սեփական տուն կառուցելու նպատակով		մշակվում է գործողությունների ծրագիր և ռազմավարություն համայնքը տնակներից ազատելու համար: Անհատական բնակելի տների կառուցման հարցը կարգավորվում է համայնքի փաստաթղթերով ՀՀ օրենսգրքի դրույթներին համապատասխան
		4.Մուշ թաղամասում աղբի կուտակման խնդիրների հետ կապված	Ընդունված չէ	Վերը նշված խնդիրը բավականին մասշտաբային է և ներկայումս ՀՀ կառավարության հետ համատեղ քննարկվում է քաղաքից դուրս նոր մարզային աղբավայր ստեղծելու հարցը, այդ իսկ պատճառով ՀՀՀԶԾ-ում չի ընդգրկվել
		5.Գյումրիում առկա կիսակառույց շենքերի և շինությունների գույքագրում	Ընդունված չէ	Գյումրիում առկա կիսակառույց շենքերն ու շինություններն գույքագրված և հաշվառված են համայնքի անշարժ գույքի հաշվեկշռում

3	«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն Գյումրու համայնքապետարան մուտքագրած գրություն **Դ/21984-21 20.12.2021** «Ապրելու երկիր» խմբակցութուն Գյումրու համայնքապետարան մուտքագրած **Դ/21969-21 20.12.2021**	Թափառող շների հավաքման, ստերջացման և հատուկ տարածքներ տեղափոխման խնդրի հետ կապված	Ընդունված է	
4	«Ապրելու երկիր» խմբակցութուն Գյումրու համայնքապետարան մուտքագրած **Դ/21969-21 20.12.2021**	1.Ա. Մանուկյան փողոցի կամուրջի հիմնանորոգում և վերակառուցում	Ընդունված չէ	Ներկայումս սկսվել են աշխատանքներ Ա. Մանուկյան փողոցի կամուրջի հետազոտության հետ կապված, որոշակի հարցեր ենթակա են քննարկման, այդ իսկ պատճառով չենք ընդգրկել ՀՀՀԶԾ-ում

		2. Գյումրիում մարզային գլխավոր տուրիստական կենտրոնի ստեղծում	Ընդունված չէ	Տուրիզմի զարգացմանը խթանելու նպատակով ՀՀՋԾ-ում նախատեսել ենք Գյումրու օդանավակայանում, կայարանում և Բավրայի անցակետում տեղադրել ինֆորմացիոն կենտրոններ
		3. Մշակութային կյանքի կազմակերպման համար ՀՀՋԾ անմիջական նպատակներ բաժնի 1-3-րդ կետերի ծրագրի անձնագրերի հետ կապված	Ընդունված չէ	Նշված կետերը առանձին ծրագրի անձնագրեր չեն պահանջում

		4. Մարզական կյանքի կազմակերպման, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսման համար ՀՀՀԶԾ-ի անմիջական նպատակներ բաժնի 1-ին և 2-րդ կետերում սահմանված նպատակների հետ կապված	Ընդունված չէ	Նշված կետերը առանձին ծրագրի անձնագրեր չեն պահանջում

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին

Հ/Հ	Տեղեկատվության բնույթը	Տեղեկատվության բովանդակությունը
1.	«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին	**ՏԵՂԵԿԱՆՔ** «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման մասին
2.	Հանրությանը «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ իրազեկումը	Տեղադրվել է համայնքի պաշտոնական gyumricity.am համացանցային կայքում 2021 թվականի նոյեմբերի 30-ին՝ https://www.gyumricity.am/hy/information-center/announcements/1448-2021-11-30-07-48-50 հղմամբ և համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում, հայտարարություն է տրվել Շանթ և Ցայգ հեռուստատեսություններով, փակցվել է համայնքապետարանի հայտարարությունների ցուցատախտակին՝ նաև դրսից ընթերցելու հնարավորությամբ:
3.	Հանրային քննարկման մասնակիցները	Մասնակիցների ցուցակը կցվում է:
4.	Հանրային բաց լսման և քննարկման մասնակցության արդյունքները	Հարցը միաձայն ընդունվել է հանրային բաց լսման և քննարկման մասնակիցների կողմից:

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ